

Այս փաստաթուղթը կը բացատրէ թէ NSW Health-ը ինչպէ՛ս կ'օգտագործէ շփման հետքի որոնումը՝ պսակաժահրի կամ COVID-19-ի տարածումը դանդաղեցնելու համար:

**ՔՈՎԻԾ-19-ը (COVID-19) կրնայ շատ դիրաւ տարածուիլ մէկ անձէն միւսը:
Միայն մէկ վարակուած անձ կը բաւէ որ համայնքին մէջ տարածէ COVID-19-ը:**

Ի՞նչ է շփման հետքի որոնումը:


Երբ մէկը COVID-19-ով կը վարակուի, NSW Health-ը կը հարցնէ անոնց թէ ո՛ր գացած են վերջին քանի մը օրերուն: Անոնք նաեւ տեղեկութիւններ պիտի ուզեն այն մարդոց մասին որոնք նոյն վայրին մէջ կրնան եղած ըլլալ: Սա կը կոչուի շփման հետքի որոնում: Այն մարդիկը որոնք NSW Health-էն կը հեռաձայնեն, կը կոչուին շփման հետք որոնողներ:

Առաջին Քայլ.

Եթէ COVID-19-ով վարակուած անձի մը հետ միեւնոյն վայրին մէջ գտնուած էք, NSW Health-ի շփման հետք որոնող մը ձեզի պիտի հեռաձայնէ:



Հեռախօսագանգը անձնական թիւ մը պիտի գայ, ուստի, կը խնդրենք պատասխանել զանգին:



Եթէ թարգմանիչի մը պէտք ունիք, ըսէք շփման հետք որոնողին որ թարգմանիչի մը կարիքը ունիք:

Թարգմանիչները ձրի են, եւ ձեզի ոչինչ պիտի արժեն:




Երկրորդ Քայլ

Շփման հետք որոնողը ձեզի հետ պիտի խօսի տեսնելու համար թէ ինչպէ՛ս կը գգաք:

Ձեր մասին հարցումներ պիտի հարցնեն ձեզի:

Այս տեղեկութիւնը գաղտնի պիտի մնայ:



ՇՓՄԱՆ ՀԵՏՔ ՈՐՈՆԵԼՈՒ ՔԱՅԼԵՐ

Շփման հետք որոնողը ձեզի պիտի ըստ թե ինչ հրահանգներու պետք է հետեւիք:



Դուք պետք է նաեւ ինքնամեկուսանաք: Սա կը նշանակէ տունը մնալ, հեռու այլ մարդոցմէ:



Շփման հետք որոնողը նաեւ ձեզի պիտի հարցնէ եթէ բաւարար ուտելիք եւ դեղորայք ունիք ձեր տան մէջ:



Երրորդ Քայլ

Շփման հետք որոնողը պիտի հեռաձայնէ կամ գրաւոր պատգամ ուղարկէ ձեզի երբ դուք տունն էք, ստուգելու համար թէ ինչպէ՞ս կը զգաք:



Շփման հետք որոնողը ձեզի պիտի ըստ թէ Երբ կրկին կրնաք ձեր բարեկամները եւ ընտանիքը տեսնել:

